# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Ջրափի
/093/ 34 32 20

«19» 12 2016թ

N 12/181

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 23-Ա, 24-Ն,25-Ա,26-Ա, 27-Ն 28-Ն որոշումները:

Համայնքի ղեկավար` Կ. Սարգսյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12982-16
«19» 12 16թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 23 -Ա

<<15>> դեկտեմբերի 2016 թվական գյուղ Ջրափի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ՝ կողմ ------------------
ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ------------------
ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ կողմ ------------------
ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ------------------
ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ------------------

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

«15» դեկտեմբեր 2016 թվական
գյուղ Ջրափի

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ջրափի համայնքի
ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15 -ի
թիվ 23 -Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Գույքի անվանումը | Չափի միավորը | քանակը | հաշվեկշռային արժեքը | օգտ. վիճակը |
|---|---|---|---|---|---|
| | Գյուղապետարան | | | | . |
| 1 | Փոստի շենք | հատ | 1 | | չի աշխ |
| 2 | բնակելի շենք | հատ | 46 | | բավարար |
| 3 | մանկապարտեզ | հատ | 1 | | չի աշխ |
| 4 | ջրամբար խմելու ջրի | հատ | 2 | | լավ |
| 5 | Էլ. Բատարե /ЮПС/ | հատ | 2 | 62000 | լավ |
| 6 | ներհամայնքային ջրագիծ | կմ | 4.5 | | բավարար |
| 7 | ներհամայնքային կոյուղագիծ | կմ | 3.5 | | բավարար |
| 8 | խմելու ջրի խորքային հոր | հատ | 2 | | լավ |
| 9 | ներհամայնքային ոռոգման ցանց | կմ | 92.6 | | չի աշխ. |
| 10 | փողոցների /ասֆալտապատ./ | կմ | 8 | | վատ |
| 11 | ճանապարհներ / դաշտամիջյան/ | կմ | 20 | | բավարար |
| 12 | Մարզադաշտ | հատ | 1 | | բավարար |
| 13 | գյուղական գերեզմանոց | հա | 3 | | բավարար |
| 14 | երկաթյա շկաֆ | հատ | 1 | | բավարար |
| 15 | գրասեղան | հատ | 5 | 140000 | բավարար |
| 16 | աթոռներ | հատ | 8 | 120000 | բավարար |
| 17 | պահարան | հատ | 1 | | բավարար |
| 18 | նավթամթերքի տարաներ | հատ | 8 | | բավարար |
| 19 | տիպային հիվանդանոցի շենք | հատ | 1 | | չի աշխ. |
| 20 | ներհամայնքային կամուրջ | հատ | 3 | | բավարար |
| 21 | ավտոմեքենա | հատ | 1 | 2630000 | լավ |
| 22 | ավտոմեքենաի գազի բալոն | հատ | 1 | 333200 | լավ |
| 23 | համակարգիչ INTEL | հատ | 1 | 150000 | լավ |
| 24 | համակարգիչ Պ-4 ZIP | հատ | 1 | 200000 | լավ |
| 25 | Մոնիտոր | հատ | 2 | 293000 | լավ |
| 26 | տպիչ | հատ | 1 | 47000 | լավ |
| 27 | Սեղան օֆիսային | հատ | 1 | 180000 | լավ |
| 28 | Աթոռ օֆիսային | հատ | 1 | 60000 | բավարար |
| 29 | ստեղնաշար | հատ | 2 | 12000 | լավ |
| 30 | մկնիկ | հատ | 2 | 6000 | լավ |
| | | | | | |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Գրադարան | | | | |
| | | | | | |
| 1 | քարտարկղ | հատ | 1 | | վատ |
| 2 | երկաթյա գրադարակներ | հատ | 32 | | բավարար |
| 3 | ցուցափեղք | հատ | 4 | | բավարար |
| 4 | գրքի ցուցափեղք | հատ | 2 | | բավարար |
| 5 | գրապահարան | հատ | 4 | | բավարար |
| 6 | գրականություն /գրքի ֆոնդ/ | կտոր | 6650 | | բավարար |
| | | | | | |
| | | | | | |
| | Մշակույթի տուն | | | | |
| 1 | մշակույթի տան շենք | հատ | 1 | | բավարար |
| 2 | սեղան | հատ | 1 | | վատ |
| 3 | դահլիճի աթոռներ | հատ | 100 | | Պիտանի չէ օգտագործման |
| | | | | | |
| | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 24 -Ն

<< 15 >> դեկտեմբերի 2016 թվական — գյուղ ՋՐԱՓԻ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի ԹԻՎ 20 -Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15 -ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 20 -Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ՝ կողմ ----------------

ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------

ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ կողմ ----------------

ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------------

ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

« 15 » դեկտեմբեր 2016 թվական

գյուղ Ջրափի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի ԹԻՎ 24 -Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7000(յոթ հազար ) դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

10000(տաս հազար ) դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

12000(տասներկու հազար ) դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

20000(քսան հազար ) դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝900( ինն հարյուր) դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝1500(մեկ հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900( ինն հարյուր) դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. 1500 (մեկ հազար հինգ հարյուր)դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2200(երկու հազար երկու հարյուր ) դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001(տաս հազար մեկ )դրամ:

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար մեկ) 13001(տասներեք դրամ:

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001(քսան հազար մեկ )դրամ:

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001(քսանհինգ հազար մեկ )դրամ:

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001(քառասունհինգ հազար մեկ )դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1800(մեկ հազար ութ հարյուր ) դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001(տաս հազար մեկ )դրամ:

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար մեկ) 13001(տասներեք դրամ:

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001(քսան հազար մեկ )դրամ:

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001(քսանհինգ հազար մեկ )դրամ:

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001(քառասունհինգ հազար մեկ )դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար

300(երեք հարյուր ) դրամ

բ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

50 000 (հիսուն հազար )դրամ.

գ) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

10 000(տաս հազար ) դրամ:

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

1000(մեկ հազար) դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

5001 (հինգ հազար մեկ )դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

10001(տաս հազար մեկ )դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

15001(տասնհինգ հազար մեկ )դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

20001(քսան հազար մեկ )դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

30001(երեսուն հազար մեկ )դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

500( հինգ հարյուր )դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

1001(մեկ հազար մեկ )դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

2001(երկու հազար մեկ )դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

4001(չորս հազար մեկ )դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

8001(ութ հազար մեկ )դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

15001(տասնհինգ հազար մեկ )դրամ.

դ) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

դա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 30 (երեսուն )դրամ

դբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 250(երկու հարյուր հիսուն ) դրամ

դգ) մեկ շաբաթվա համար՝ 500(հինգ հարյուր ) դրամ

դդ) մեկ ամսվա համար՝2500(երկու հազար հինգ հարյուր) դրամ

դե) մեկ տարվա համար՝ 10000(տաս հազար ) դրամ:

5[1] Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 (հիսուն հազար ) դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000(քսանհինգ հազար ) դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000(հիսուն հազար ) դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000(երկու հարյուր հազար ) դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000(հինգ հարյուր հազար ) դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000(երկու հարյուր հիսուն հազար ) դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000(մեկ հարյուր հազար ) դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000(մեկ հազար ) դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500(երկու հազար հինգ հարյուր) դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000(մեկ հազար ) դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ 250(երկու հարյուր հիսուն ) դրամ

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 100(մեկ հարյուր) դրամ :

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000(մեկ հազար ) դրամ.

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000(հիսուն հազար ) դրամ.

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

2000(երկու հազար ) դրամ.

9.1.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ.

10. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար ) դրամ

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝5 000 000 (հինգ միլիոն ) դրամ

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 (յոթ միլիոն ) դրամ

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝10 000 000 (տաս միլիոն ) դրամ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ա) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000(հինգ հազար )դրամ

բ)Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.3000(երեք հազար )դրամ

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.2000(երկու հազար )դրամ

դ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմավում է.

կենցաղային աղբի համար՝

դա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝50(հիսուն )դրամ

ե) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար.

ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

եա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000(մեկ հազար )դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 25 -Ա

<< 15 >> դեկտեմբերի 2016 թվական

գյուղ Ջրափի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի ԹԻՎ 21 -Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ղեկավարի 2017 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 30.23 %-ի չափով՝ 200000(երկու հարյուր հազար) դրամ:
2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ղեկավարի 2016 թվականիվարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 21 -Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ՝ կողմ ----------------
ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------
ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ կողմ ----------------
ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------------
ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

« 15 » դեկտեմբեր 2016 թվական

գյուղ Ջրափի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 26 -Ա

<< 15 >> դեկտեմբերի 2016 թվական — գյուղ Ջրափի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի ԹԻՎ 22 -Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի, 4-րդ մասի 1-ին կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանին

որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 9 :

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 15 -ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 22 -Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ | կողմ | ------------------- |

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

« 15 » դեկտեմբեր 2016 թվական

գյուղ Ջրափի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ջրափի համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ 26 -Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 120000 | 60.0 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 124000 | 62.0 |
| 3 | Գլխավոր մասնագետ (2.3-1) | 1 | 123000 | 61.5 |
| 4 | Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1) | 1 | 122000 | 61.0 |
| 5 | 1կարգի մասնագետ (3.2-1) | 1 | 120000 | 60.0 |
| | | | | |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | |
| 6 | Օպերատոր | 1 | 96000 | 48.0 |
| 7 | Ակումբ-գրադարանավար | 1 | 110000 | 55.0 |
| 8 | Վարորդ | 1 | 110000 | 55.0 |
| 9 | Ջրհան կայանի վարպետ | 1 | 93000 | 46.5 |
| | | | | |
| Ընդամենը | | 9 | 1018000 | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 27 -Ն

<< 15>> դեկտեմբերի 2016 թվական                                    գյուղ Ջրափի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի 2017թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5          Դեմ՝ 0          Ձեռնպահ՝ 0

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ՝ կողմ ----------------

ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------

ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ կողմ ----------------

ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------------

ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ----------------

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ          ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

« 15 » դեկտեմբեր 2016 թվական
գյուղ Ջրափի

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ջրափի համայնքի
ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15 -ի
թիվ 27 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

| Հ/հ | Եկամուտներ | Հոդվածի համարը | Ընդամենը /հազար դրամ/ | Վարչական մաս /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1000 | Ընդամենը եկամուտներ | - | 19739.7 | 19739.7 |
| 1100 | Հարկեր և տուրքեր | 7100 | | |
| 1110 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | | |
| 1112 | Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար | | 3500.0 | 3500.0 |
| 1120 | Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 1964.5 | 1964.5 |
| 1130 | Տեղական տուրք | 7145 | 64.0 | 64.0 |
| 1250 | Դոտացիա | 7331 | 12795.4 | 12795.4 |
| 1330 | Գույքի վարձակալության եկամուտներ, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճար | 7415 | 1415.8 | 1415.8 |
| | Այլ եկամուտներ | 7451 | | |

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Հ/հ | Ծախսի անվանումները | Հոդվածի համարը | Ընդամենը /հազար դրամ/ | Վարչական մաս /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 4000 | Ընդամենը ծախսեր | | 19739.7 | 19739.7 |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 15000.0 | 15000.0 |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 400.0 | 400.0 |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 4213 | | |
| 4214 | Կապի ծառայություններ | 4214 | 100.0 | 100.0 |
| 4215 | Ապահովագրական ծախսեր | 4215 | 40.0 | 40.0 |
| 4221 | Ներքին գործուղումներ | 4221 | 50.0 | 50.0 |
| 4232 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 40.0 | 40.0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 50.0 | 50.0 |
| 4238 | Ընդ. բնույթի այլ ծառայություններ | 4239 | 450.0 | 450.0 |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 100.0 | 100.0 |
| 4251 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 200.0 | 200.0 |
| 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 50.0 | 50.0 |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստներ | 4261 | 150.0 | 150.0 |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 700.0 | 700.0 |
| 4268 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 700.0 | 700.0 |
| 4533 | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 50.0 | 50.0 |
| 4634 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 500.0 | 500.0 |
| 4723 | Պարտադիր վճարներ | 4823 | 20.0 | 20.0 |
| 4771 | Պահուստային միջոցներ | 4891 | 1139.7 | 1139.7 |

## ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Հ/հ | Ծախսի անվանումները | բաժին | խումբ | դաս | Ընդամենը /հազար դրամ/ | Վարչական մաս /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | | | 4 | 5 |
| 2000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+ տող2200+ տող2300+ տող2400+ տող2500+ տող2600+ տող2700+ տող2800+ տող2900+ տող3000+ տող3100) | | | | 19739.7 | 19739.7 |
| 2100 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+ տող2120+ տող2130+ տող2140+ տող2150+ տող2160+ տող2170+ տող2180) | 01 | 0 | 0 | 16850.0 | 16850.0 |
| | այդ թվում | | | | | |
| 2110 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 01 | 1 | 0 | 16710.0 | 16710.0 |
| | որից | | | | | |
| 2111 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 01 | 1 | 1 | 16710.0 | 16710.0 |
| 2130 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 01 | 3 | 0 | 90.0 | 90.0 |
| 2133 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 01 | 3 | 3 | 90.0 | 90.0 |
| 2160 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 01 | 6 | 0 | 50.0 | 50.0 |
| 2161 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 01 | 6 | 1 | 50.0 | 50.0 |
| 2400 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+ տող2420+ տող2430+ տող2440+ տող2450+ տող2460+ տող2470+ տող2480+ տող2490) | 04 | 0 | 0 | 280.0 | 280.0 |
| 2420 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | 04 | 2 | 0 | 80.0 | 80.0 |
| 2421 | Գյուղատնտեսություն | 04 | 2 | 1 | 80.0 | 80.0 |
| 2443 | Տրանսպորտ | 04 | 5 | 0 | 200.0 | 200.0 |
| 2451 | Ճանապարհային տրանսպորտ | 04 | 5 | 1 | 200.0 | 200.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2600 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+ տող3620+ տող3630+ տող3640+ տող3650+ տող3660) | 06 | 0 | 0 | 570.0 | 570.0 |
| 2630 | Ջրամատակարարում | 06 | 3 | 0 | 120.0 | 120.0 |
| 2631 | Ջրամատակարարում | 06 | 3 | 1 | 120.0 | 120.0 |
| 2640 | Փողոցների լուսավորում | 06 | 4 | 0 | 450.0 | 450.0 |
| 2641 | Փողոցների լուսավորում | 06 | 4 | 1 | 450.0 | 450.0 |
| 2800 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+ տող2820+ տող2830+ տող2840+ տող2850+ տող2660) | 08 | 0 | 0 | 400.0 | 400.0 |
| 2820 | Մշակութային ծառայություններ | 08 | 2 | 0 | 400.0 | 400.0 |
| 2824 | Այլ մշակութային կազմակերպություններ | 08 | 2 | 4 | 400.0 | 400.0 |
| 2900 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+ տող2920+ տող2930+ տող2940+ տող2950+ տող2960+ տող2970+ տող2980+ տող) | 09 | 0 | 0 | | |
| 2920 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 09 | 2 | 0 | | |
| 2922 | Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն | 09 | 2 | 2 | | |
| 3000 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+ տող3020+ տող3030+ տող3040+ տող3050+ տող3060+ տող3070+ տող3080+ տող3090) | 10 | 0 | 0 | 500.0 | 500.0 |
| 3070 | Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող) | 10 | 7 | 0 | 500.0 | 500.0 |
| 3071 | Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող) | 10 | 7 | 1 | 500.0 | 500.0 |
| 3100 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | 11 | 0 | 0 | 1139.7 | 1139.7 |
| 3110 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 11 | 1 | 0 | 1139.7 | 1139.7 |
| 3112 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 11 | 1 | 2 | 1139.7 | 1139.7 |

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 28 -Ն

«15» դեկտեմբեր 2016թ. գյուղ Ջրափի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Ջրափի համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 23-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

Ծախսային մաս

ա) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ 4891 հոդվածի «1017.4»թիվը փոխարինել «0.0»թվով:
բ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի կոմունալ ծառայություններ 4213 հոդվածի «700.0»թիվը փոխարինել «622.4»թվով:
գ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրափի համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 4112 հոդվածի «0.0» թիվը փոխարինել «1095.0»թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

| | |
|---|---|
| ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ՝ | կողմ |
| ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ | կողմ |
| ԱՐԹՈՒՐ ՏՈՆՈՅԱՆ՝ | կողմ |
| ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ | կողմ |
| ՖԻՐԴՈՒՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ | կողմ |

ՋՐԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

« 15 » դեկտեմբեր 2016 թվական
գյուղ Ջրափի